


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓՈՒՐ

Նամակ կամ ուր եւ քրոքիւն
պէտք է ուղղել առ
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼԵԱԳՐ
Պազար Մուրուր, ԳԱՅԻՐԷ

Direction du Journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եզրագրութիւն 50 ար. 80
» » վեցամսեայ » 50
Օսար երկիրներ սարեկան Ֆրանս 25
» » վեցամսեայ » 14
Թղթասարի ծախքը խմբագրու-
թեան վրայ է :

Խմբագրութեան ուղղուած նա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր :

ԻԶՄԻՐԼԵԱՆ ՍՐԲԱԶԱՆԻ
ԱՌԱՋԱՆՈՐԴԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Մանուկներու պէտքերը ուսումնական
պատերազմէն սկսելով, թրքահայտաակ հայե-
րուն գերիշխան պետութեան հետ ունեցած
յարաբերութիւնը քաղաքական փոփոխու-
թիւն ու նշանակութիւն ստացած ըլլալով,
մեր հանրային այս կամ այն դործին նկատ-
մամբ կտրուի ու կանխահա փճիւններ ար-
ձակելէ առաջ պարտաւոր ենք այս կարեւոր
հանգամանքը նկատողութեան առնել :

Ինչի կը թուի որ այն թերթերը որոնք
Իզմիրլեան Սրբազանի անձին մէջ կատար-
ուած եզրագրութիւն առաջնորդական ընտրու-
թիւնը երազական նկատեցին ու անոր վաւ-
րացման հաւանականութիւնը կատարածի ներ-
քեւ դրին՝ բոլորովին անտես ըրած են վե-
րոյիշեալ հանգամանքը և այն փոփոխու-
թիւնները զոր մեր քաղաքական կայսրութիւնը
կը կրէ, նպատակաւոր կամ աննպատակ ու-
րազանքու համեմատ և անոնց ազդեցու-
թեան :

Հետեւեալը այսինչ տուեալ պայմանին
մէջ պատահած դէպք մը իրաւունք չի տար
մեզի հետեւցնել թէ անոր կրկնութիւնը ան-
պատճառ անխուսափելի է տարբեր պայման-
ներու տակ : Ընդհակառակը պէտք է մեր
տեսութիւնները հիմնենք պարագաներու ու
պայմաններու փոփոխութեան վրայ :

Այսպէս, օրինակի համար, Աշգեանի
օրով Իզմիրլեան Սրբազանի Կրօն. Ժողովի
պարզ անդամակցութիւնը մերժուեցաւ, մինչ
Սասունի կոտորածէն յետոյ, նոյն անձնա-
ւորութեան պատրիարքական ընտրութիւնը
վաւերացուեցաւ : Դարձեալ Աշգեանի պաշ-
տօնավարութեան ատեն, Ալեքսանդրիայի Կոյս-
կոպոսի Կրօն. Ժողովին անդամակցութիւնը
չընդունուեցաւ, մինչ Իզմիրլեան Սրբազանի
պատրիարքութեան օրով նոյն եկեղեցականը
Կրօն. Ժողովի անդամ կըրցաւ ըլլալ :

Ինչու՞ այս խտրութիւնները : Պատճառը
չառ բացայայտ է : Աշգեանի պատրիարքի
օրով Սուլթանը հայկական խնդրէն երկիւղ
չունէր. Աշգեան հրա դործիք մըն էր Սուլ-
թանին ձեռքը. Եւրոպա մեղմով չէր հե-
տաքրքրուէր : Իզմիրլեանի և Ալեքսանդրիայի
նկարագրով անձեր դուր չէին գար Սուլթա-
նին և անոնց Պատրիարքարանի մէջ տեղա-

ւորուիլը գուցէ բարեբար ազդեցութիւն ու-
նենար Աշգեանի մօքին վրայ, բան մը որ
հակառակ էր պետական շահերուն :

Մինչդեռ 1894 Վերջերը Սասունի կո-
տորածը ահագին աղմուկ հանած էր Եւրո-
պական աշխարհին մէջ, գերիշխան պետու-
թիւնը պատասխանատու կը նկատուէր եղած
չարիքներուն : պէտք էր կերպով մը մեղմել
միտքերու գրգռութիւնը. և ահա Սուլթանը
իր շահերուն նպատակաւոր համարեց Իզմիր-
լեան Սրբազանի ընտրութիւնը վաւերացնել :

Մեր մէջ պակաս չեն կարգ մը միա-
միտներ որոնք կը կարծեն թէ թուրք կա-
ռավարութեան պետը երկիւղ կը կրէ մեր
այն բացառիկ եկեղեցական անձնաւորու-
թիւններէն, որոնք անհաճոյ են իրեն : Այս
համոզումը սխալ է : Մեր եկեղեցականները
իրենց կրօնով, խելով և ամբողջ հայրե-
նասիրութեամբ հանդերձ անկարող են հիմ-
նական փոփոխութիւն յառաջ բերել մեր
քաղաքական կեանքին մէջ՝ ցորչափ եւրոպա-
կան պետութիւնները փարած կը մնան իրենց
աններդաշնակ քօնէիներ : Սուլթանը այս ի-
րողութիւնը չառ լաւ գիտէ և վաւերացնե-
լով Իզմիրլեանի պատրիարքական ընտրու-
թիւնը ապացուցած եղաւ թէ ինքը ո՛ր և է
հայ եկեղեցականէ երկիւղ չունի : Անցողա-
կի նոյն բանը ըսեմք Խրիսեան Հայրիկի հա-
մար. կը կարծուէր թէ իր կաթողիկոսա-
կան ընտրութիւնը չպիտի վաւերացուէր Զա-
րին կողմէն : Հակառակը պատահեցաւ, և
Զարը իրաւունք ունէր : Կաթողիկոս Հայրիկը
նոյնքան վտանգաւոր գարձաւ ուսական շա-
հերուն՝ որքան հանգուցեալ Մակարը — այ-
սինքն բնաւ. տարբեր կերպով չէր կրնար
ըլլալ :

Ճիշտ է որ Սուլթանը չախորժի Իզմիր-
լեանի պէս ուղղամիտ եկեղեցականներէն
որոնք արդեւք կ'ըլլան լուիկ կերպով հայ ազ-
գը փճացնելու մասին իր ծրագրած քաղա-
քականութեան : բայց իրեն համար տարբեր
միջոցներ չեն պակսիր հասնելու իր նպատա-
կին, և անոնց առջև նոյն խի Իզմիրլեանի
կորովն ալ օգուտ չընեն : Եւ սակայն Սուլ-
թանը ունի քաղաքական տարբեր շահեր, ո-
րոնք իր ծրագրին անուղղակի կերպով կըր-
նան նպաստել, և այդ շահերը երբեմն կը

գործեն զինքը պղտիկ զիջումներ ընել մինչև
խի իր չախորժած անձերուն :

Հիմայ քննենք թէ հայերուն արդի կա-
ցութիւնը ո՞ր աստիճան նպաստաւոր հանդա-
մանքներ կ'ստեղծէ Իզմիրլեան Սրբազանի ա-
ռաջնորդական վաւերացումին համար :

Նախ պէտք է ընդունիլ որ հայկական
խնդիրը բոլորովին մոռցուած չէ ու ոչ ալ
կրնայ բոլորովին մոռցուիլ. որչափ ատեն որ
Թիւրքիան գոյութիւն ունի նոյնքան ատեն
գոյութիւն պիտի ունենայ նաեւ Թուրքիոյ
ընդհ. բարեկարգութեան խնդիրը որու մէկ
մասը — ու ջղուտ մասը — կը կազմէ հայկա-
կանը :

Հայկական խնդրին մոռցուած չըլլալը
յայտնի կըլլայ նոյն ինքն Սուլթանին մտա-
հոգութենէն, որ յատուկ պատգամաւոր մը
խրկեց վերջերս Զարին քով, խոստանալով
Եւրոպայի ուղածին պէս կարգադրել կրեոա-
կան խնդիրը, պայմանաւ սակայն որ Եւրոպան
ալ Թուրքիոյ Անատոլիոյ ստացուածքներուն
ամբողջութիւնը երաշխաւորէ :

Մտաւայ պայթումի մը առաջքն առ-
նելու համար է նմանապէս որ Սուլթանը Ա-
նատոլիոյ մէկ քանի նահանգներուն մէջ խա-
փուսիկ հանդարտութիւն մը յառաջ բերած
է ու կայսատի ամեն ձեւականութիւն լրա-
ցնելը որպէս զի հարցում մը եղած ատեն
կարենայ պատասխանել թէ արդէն ինքը Ա-
նատոլիոյ բարեկարգութեան ձեռնարկած է
ու փութով յառաջ կը տանի : Նոյն խի Պոլ-
սոյ հայ մամուլին գրելու տեսակ մը ազա-
տութիւնը ապացոյց մըն է որ Սուլթանը
կուզէ անկարեւոր բաներու մէջ զիջումներ
ընել և մեր Ժողովրդային դիւրահաւանու-
թենէն օգտուիլ հայերը իրեն հետ հաշտ
պահելով հանդերձ անոնց տկարացման մա-
սին լուիկ ու զօրաւոր ծրագիր մը գործա-
դրելու :

Իզմիրլեան Սրբազանի առաջնորդական
ընտրութեան վաւերացումը կարի նպատաւ-
որ է սուլթանական շահերուն : Սուլթանը
գիտէ թէ Իզմիրլեան որքան սիրուած ու
պաշտուած է ամբողջ հայ ազգէն : Վաւերա-
ցնելով ն. Սրբազանութեան ընտրութիւնը
ցոյց տուած պիտի ըլլայ թէ որքան «բարեա-
ցակամ» տրամադրութիւններ ունի իր սիրեց-

եալ հաւատարիմ հայ ազգին համար, ու այս կերպով պիտի հրահրէ ազգային խանդավառութիւնը :

Տեսակ մը երախտագիտական զգացում չունեցած հանդէպ Ռուսիոյ Չարին, երբ «Նորին ամենողորմած մեծութիւնը» բարեհաճեցաւ վաւերացնել Հայրիկի կաթողիկոսութիւնը : Չէ՞ք կարծեր որ այս անգամ ալ հայերը եթէ ոչ երախտագիտութիւն՝ գէթ տեսակ մը հաշտութիւն ունենան Սուլթանին հետ, երբ վաւերացնէ իզմիրլեանի ընտրութիւնը : Այս դէպքը Եւրոպայի մէջ ալ աւազանգ պիտի գտնէ ի նպաստ Սուլթանին, այնպէս որ, Սուլթանը առանց հանրային տեսակէտով հիմնական գործ մը տեսած ըլլալով՝ հայ ազգին մեծ ծառայութիւն մը մատուցածի համբաւ պիտի չահի ու պիտի գէթ ժամանակի մը համար մոռցնել տայ իրական բարեկարգութիւններու խնդիրը :

Միւս կողմէն Սուլթանին համար ամեն նշանակութեան զուրկ է Եգիպտոսի առաջնորդութիւնը : Եգիպտոսը Անատոլիոյ է. իզմիրլեան Սրբազանն ոչ մէկ մասնակցութիւն չի կրնար ունենալ Թուրքիոյ ներքին գործերուն՝ հետեւաբար խոշնդոտ ըլլալ հակահայկական ծրագիրներու :

Իզմիրլեան Սրբազանը մեծապէս յարգողներէն ըլլալով հանդերձ, մենք ո՛չ միայն հաւանական կը նկատենք Ն. Սրբազանութեան վաւերացումը այլ մինչև իսկ քիչ մըն ալ կը տխրինք անով, որովհետև այդպիսի վաւերացում մը ազգին աչքին փոշի փչելու պէս բան մը պիտի ըլլայ :

X

ԱՆԿԵՂԾ ԽՈՍՏՎԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ

(ԲԱՅ ՆԱԽԱԿ ԱՌ ԼՕԼԱ)

Կը պահանջես որ անպատճառ քեզ գրեմ : Աւատիկ, Լօլա :

Գուցէ վերջին նամակս է այս : Որովհետև ալ՝ ձանձրացած եմ և յոգնած, կեանքի կատակերդութեան մէջ jeune premierի դերը կատարելի :

Ամեն օր մէջ մէկ նոր սուտ դարձնելու հարկը, սոսկում, պէզուանք կաղզէ կոր ինծի և կուգեմ, միանգամ ընդ միշտ, վերջ մը դնել այն կայսութեան որ ալ ես չի կրնար տեսել, և պատճառ մը չունի տեսելու :

Պիտի ուզէի դեռ երկար տառն քեզ սիրել — որքան անուշ պիտի ըլլար — բայց, աւա՜ղ, չեմ կրնար կոր : Չեմքէս եկածը ըրի, անկեղծ ըլլալու, հաւատալու համար, բայց ի դուր, ոչ այդ ուժը ունիմ և ոչ ալ ատ հաւատքը :

Մերողները միմեկ երջանիկ կրնան ըլլալ, և չես գիտեր, վարդապետ և աղւոր Լօլա, թէ որքան դժուար է զգալ երջանկութեան մենէ խոյս տուող :

Միքել ուզել և չի կրնալ՝ հոգւոյ տաժանակիր աշխատութիւնն է այդ՝ որուն դատաւարտութեան է իմինս, գուցէ ցիւանս ըլլալու պայմանաւ :

Այն ամեն գերբնային սուտերը զորս օրն ի բուն կը յերկրէի, իմ սիրողի գերս փայլուն կերպով կատարելու համար, իրենց մէջ գարշելի, ստորնացուցիչ բան մը չունէին, ըսէ՞ :

Չէի՞ր տեսներ որ մեր սիրահարական զուգերգին մէջ չարունակ fansse noteեր ունէի շրթներու վրայ, և թէ : պէտք էր, ուչ կամ կանուխ, փոր առնել զիմակս որուն ետին ալ կարելի չէր աղատ չունչ առնել : Կը խեղդուէի կոր :

Կեղծաւորութեան պաշարս հատաւ, Լօլա, և վայրկեանը եկած կը համարիմ զգացումներս վերլուծելու, սիրտս քննելու և հոգիս մերկայանելու :

Այս փափուկ և դժուար գործողութեան

ետին է որ կը տեսնեմ թէ քեզ չեմ սիրեր կոր, չեմ կրնար սիրել :

Սակայն ատով չես դադրիր գեղեցիկ ըլլալ : անուշտ բերանդ իր զգլխիչ, անուշ համայնները պիտի ունենայ, և այտերդ իրենց թարմութիւնը և թափշը պիտի ընծայեն՝ համայնական շրթներու : Գարձեալ կը սիրեմ զէմիդ զոգուր, հիւնայի կարտածը, ծնոտիդ կաթնաթոր կտրուութիւնը և սե, մարմնդ աչքերուդ խորհրդաւոր աղբորութիւնը :

Չեմ կրնար բացատրել սակայն թէ որն է այն զգացումը որով կապուած եմ ես քեզի : Գեղեցկադիտութեան ճաշակս է թերեւ, ուղեգային, զինու սկիւն : Իրաւ է որ ցնցում մը, հաճոյք մը կըգտնեմ երբ քեզ կը տեսնեմ, սիրտս բարախումներ կ'ունենայ, բայց տաթիկայ իմ ուղած, երեւալայած սէրս չէ ապահովաւոր :

Եւ քեզ չսիրեմ — իմ հասկացած եղանակովս — անկէ յայտնի է որ ամեն բան իր իսկական գոյնովը կ'սխալմ կոր տեսնել, դատողութիւնս տեղն է և կայսութեան գիտակցութիւնը ունիմ :

Միւսին տառն անտարբեր չեմ բու նկատմամբ, ընդհակառակը, քեզ կը սիրեմ տակաւին, բայց, ճիշտ ինչպէս կը սիրեմ Պարթիկի մէկ վէտը, երաժշտական հատուած մը, անուշեղէնի պատուած մը, գեղեցիկ նկար մը, թիթեռնիկներու ստատուտով, մանուշակին բոյրը, Մայիսի առատութիւնը : Վոսիւրի՛ քա՛ : Վոսիւրի՛ եղբայրներուն վրայ, բնականաբար և վերջապէս այն ամեն բաները որ կարծէ սիրել :

Բայց ես պիտի ուզէի որ քեզի համար ունեցած սէրս ատորմէ տարբեր ըլլար, ատկէ աւելի վեր, աւելի բուռն, աւելի գերմարդկային, որուն առջև երջանկութիւնը աննշան բան մը ըլլար և մա՛ր խաղաղ մը :

Ահա այդ սէրն է որ կը փնտռեմ ներսիդիս և չեմ գտներ :

Սէրը այն ատեն ճշմարիտ է երբ ամեն զոհողութիւն ընելու պատրաստ և ամեն դժուարութիւններ տանելու տրամադիր կըգտն մարդ ինք, զինքը :

Նիւէ, կիներու յատուկ քմահաճոյքով մը, յանկարծ ըսէի ինծի — ձեռքի երկու մատներդ կորէ որ բուկը ըլլամ — ինչ, կը կարծես թէ այդ քաջութիւնը պիտի ունենայի. allons donc : հետեւաբար քեզ համար ունեցած սէրս սեր չէ, ինչու խափենք զիրար :

Ասանկ մերկապարանոյ տղեղութիւններ և տանկ սոսկայի ճշմարտութիւններ ըսելու համար, մի՛ սրբողիր, հոգիս : հաւատաւ որ այս տողերով՝ ձեռքդ ձեռքիս մէջ ունենալու և չունչերնիս իրար խառնելու երջանկութեան կը զրկեմ կոր ես զիս, ինչ որ կապալուցանէ թէ անկեղծ ըլլալու համար ատկէ աւելի մեծ զոհողութիւն մը չէի կրնար ընել :

ՌԱՏԱՄԵՍ

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Յանակարն փոխառութեան խնդիրը անգամ մը որ կարգադրուած է, թրքական բանակին Թէսալիայէ քաշուելու հարցը ստիպողական ձեւի մը տակ մէջտեղ կը դրուի :

Ապրիլ 30 ին և Մայիս 5 ին դեսպանները հաւաքական ծանուցագրեր տուած են Բ. Իրան : Առաջինը նպատակ ունէր զգայնել թրքական կառավարութեան թէ եւրոպական պետութիւններու համաձայնութիւնը կատարուել է և թէ որոշած են յարգել տալ թուրքիոյ, իր տուած խոստումները : Վերջի ծանուցագիրը աւելի բացայայտ է : Պատերազմական տուգանքին չորս մասնակի վճարումներու մասերուն թուականները կ'որոշէ և կը պնդէ որ թրքական բանակին ետ քաշուելու գործողութիւնը սկսի, ծանուցագրին տրուելէն անմիջապէս վերջը :

Չորս յաջորդական վճարումներուն թուականներն են 15 Մայիս, 25 Մայիս, 10 Յունիս, 10 Յուլիս :

Առջի վճարումը (մէկ միլիօն թրքական ոսկի) պիտի ըլլայ միայն ան ատեն երբ ետ քաշուելու գործողութիւնները սկսին : Վերջի երկու վճարումները թրքական բանակին ամբողջովին ետ քաշուելէն վերջը պիտի ըլլան :

—Այժմիկ լրագիրները կիսաջնջն թէ ամայս Ծին գլխատուած են Քարտիցի և Ճօրճի, որոնք մահուան դատաւարտուած էին Եօրկիոս թագաւորին վրայ սպաննութեան փորձ մը կատարած ըլլալուն համար :

—Պ. Չէմալըլէն Պիրմինկճամի մէջ աղբու և ահադին տագնապութիւն առաջ բերող ճառի մը մէջ բացատրած է թէ Անգլիոյ կացութիւնը շատ ծանր է եւրոպական նիդակակցութիւններու և Ռուսիոյ չինական յաղթանակներուն հանդէպ :

Պէտք է որ, աւելցուցած է, Անգլիոյ մէկ կողմ ձգէ ալ ես մենացամաքաբար կանոնութիւնը և դաշնակցի Միացեալ Նահանգներուն հետ :

Այդ ճառը մեծ աղեղնութիւն ունեցած է քաղաքական շրջանակներու մէջ :

Պէտքիս և Բարիդի լրագիրները կ'այսպանեն զայն, ըսելով թէ ատկեա փոխանակ ներկայ դժուարութիւնները թեթեւցնելու, զանոնք աւելի ծանրացնելու հանգամանք ունի :

Անկլո-ամերիկեան դաշնակցութեան մը դադարաւորը ահագին զայրոյթ յառաջ բերած է Սպանիոյ մէջ : Սպանիական կառավարութիւնը պետութիւններու ուշադրութիւնը հրաւիրած է՝ այդպիսի միութեան մը եւրոպայի համար ունենալիք վտանգները մէջտեղ դնելով :

ԱՅԺՄԵՈՒԹԻՒՆ

ԿԵԼԹԻ ՄՕՐ

Պ. Չէմալըլէնի ճառը եւ Կէրթի Մօր այժմեութեան տեսակէտով՝ եւրոպայի մեջ հանրային կարծիքը ամենեւն շատ գրադեցնող երկու հրահայ խնդիրներն են այս պահուս :

Կէրթի Մօր, ահա՛ անուն մը որ մեր ընթերցողներու շատերուն անծանօթ է եւ քերեւս կը կարծուի թէ այդ անունին տակ կը պահապսի աներկացի ծովակալ մը, սպանիացի գորալար մը եւ կամ անգլիացի դիւանագէտ մը. սակայն ասանցմէ եւ ոչ մէկն է Կէրթի Մօր, որուն Ռուսիոյ ձեռքը անցնիլը Ռիսթի կը ծանուցանէր շարաքօր :

Եթէ Ռուսիոյ եւ Անգլիոյ մէջ պատերազմ մը ծագի ի մօտ — ինչ որ եւրապիոյ կուսար Մարքը Չէմալըլէնի քանախօսութիւնը, — պատերազմը մ'աշխատեցնուրիս թաժանումները, ո՛չ հացի աղութիւնը, ո՛չ հալանայի կործանումը, ո՛չ Գուպայի ապսամբութիւնը, ո՛չ տեւոթեանց չեզոքութիւնը եւ ոչ ալ բոլորիս խնդիր մը պիտի ըլլայ, այլ պարզապէս Կէրթի Մօր :

Անշուշտ ի՞նչ մը ստեղծած, վերջապէս կողմէ գիտնալ թէ այդ երկու քաղաքները «Կէրթի Մօր» ինչ կը նշանակեն :

Նախ քաղաքանեմ Ռիսթի յիշեալ հեռագիրը :

«Լօնտօն, 13 Մայիս. — Ռուս կառավարութիւնը 25,000 անգլ. ոսկիի գնեց Կէրթի

Մօր ձիւն. հաւանական է որ Էսթօթ Կօլտ Բըբ ձիւնաշաւին մէջ չի կրնայ վազել:

Այն ձիւն՝ որուն ծախսիչը Ռիսթերի միտ կը մասնակարարէ եւ ի յոր աշխարհի կը տարածուի, քնականաբար սովորական եւ մահականացու ձիւնու կարգը չի կրնար դասուիլ եւ այդ անունին շուրջը յարուցուած վէճերը կրնան ընդհանուր քաղաքականութեան վրայ Սօցիալիստի մէկ ճառին չափ ազդեցութիւն ունենալ:

Երիցս երեսնաւ չորհրդանի: 25,000 ոսկիի գնուած ձի մը քնականաբար կառքի շօնելու համար ստեղծուած չէ: Ռուս կառավարութիւնը այդ գնումով speculation մը ընկելու միտք ունէր այդ ազնուաշուք կենդանիին անգղիական ձիւնաշաւի մը մէջ վազընկելով եւ անգղիէ գումարներ վասկիլ հաւանական յաջողութեան մը շնորհիւ:

Իսկ Անգլիա ինչպէս միշտ, վարպետ կը բարձր եւ կարգիչէ այդ ձիւն մասնակցիլ Էսթօթի ձիւնաշաւին:

Ձիւնէն անգամ անգլիացի ըլլալու եւ, որամ շահելու համար... Անգլիոյ մէջ:

Ռուսիա կը բողոքէ, բայց Անգլիա խոշականք կը ըլլայ, եւ խնդիրը կը ճապարի:

Մոտալիւ Կոմսը եւ Լօրս Սօցիալիստի խիստ հետաքրքրական քննարկութիւն մը փոխանակելու վրայ եւ եւ գաւառական չի պիտի ըլլար երբ Անգլիա Մայրագոյն Արեւելի վրէժ Կելթի Մօրով չի լուծէ ռուսերէն:

Տրօվադայէն ի վեր երբեք ձիւն մը վրայ աշխատել խօսուած չէ: Արդեօք գէշ ճշմարտութիւն է ասիկայ:

Ա. Գ. Ա. ՅԻՆ

Քաղաքական ժողովը արտասովոր նիստ մը ըրաւ երկուշաբթի օր եւ զբաղեցաւ հանգուցեալ Պօլոս Էֆէնտի Կարապետեանի կըտակի խնդրով:

Երեսփոխանական Ընդհ. Ժողովը վաղը ի նիստ պիտի գումարուի Առաջնորդարանի մէջ առժամայ ատենապետութեամբ Տիար Բ. Նահապետեանի:

Հայ-Հռովմէականաց Եզիպտոսի Առաջնորդ Գեր. Հ. Բառնաբաս եպիսկոպոս Ազգէհրլեան կարճատե հիւանդութենէ մը ետքը, կիրակի օր վախճանեցաւ:

Հանգուցեալ Գերապայծառը ուղղամիտ, առաքինի, պարկեշտ եւ անշահախնդիր կղերական մըն էր եւ մեծ ծառայութիւններ մատուցած էր իր հօտին:

Յուդարկաւորութիւնը մեծ շքով կատարուեցաւ երեքշաբթի օր, եւ մարմինը ամփոփուեցաւ Հայ Հռովմէականաց Տարպէլ Կիւնէնայի եկեղեցւոյ բակին մէջ:

Երկար տարիներէ ի վեր Գահիրէի մէջ հաստատուած եւ ամենուն ծանօթ, Տիար Գէորգ Պետրոսեան, որ բաւական ժամանակէ ի վեր սրտի հիւանդութենէ կը տառապէր, հակառակ իր ընտանիքին գորովայն խնամքին եւ բժշկական ջանքերու, չկրցաւ ճողովիլ այդ անողոր խտրին ձեռքէն եւ կիր

ակի օր հոգին աւանդեց ի Մաթարիէ, ուր օգտփոխութեան համար տարած էին զինքը:

Տիար Պետրոսեան գործունեաց, պարկեշտ եւ բարի անձնաւորութիւն մըն էր եւ սիրուած ամեն անոնցմէ՝ որոնց հետ յարաբերութիւն ունեցած էր:

Հանգուցեալը կը թողու. այլի մը եւ չորս անշահախնդար զաւակներ որոնց կը թող թիւնը իր կեանքին նպատակը ըրած էր: Յուդարկաւորութիւնը երկուշաբթի օր կատարուեցաւ ի ներկայութեան ազգականաց եւ Պետրոսեան ու Նշանեան ընտանիքներու բոլոր բարեկամներուն:

Մեր խորին ցաւակցութիւնները կը ներկայացունենք հանգուցեալին ընտանեաց:

Մեր Ազգայնագիր թղթակցէն:

Մեծանուն հայրենասէր՝ Ժոռա Կոստի յուդարկաւորութիւնը կատարուեցաւ չորս օր:

Կրնամ րոպէ թէ ամբողջ Ազգայնագիր մասնակցեցաւ այդ տխուր լուսն մեծաշուք հանգուցին որուն նմանը երբեք տեսնուած չէ ոչ հօս եւ ոչ ալ Գահիրէ:

Ազգայնագիր թաղ. խորհուրդը ուղերթ ուղարկեց ընծայել հանգուցեալին յիշատակին, ի զիտաց հայ գաղութին փառաւոր սրտի մը զրկում էր: Եւ վաղեմի յիշումը յիշողներէն մէջ ուր արտաբերութիւնները կատարուեցան, Եզիպտոսի Առաջնորդական տեղապահ Գահիր Գ. Ա. Աշոտ ընկերակցութեամբ Ազգայնագիր քարոյիչ Տ. Վահրամ վարդապետի, զգեստաւորեալ ներկայ զբոսեցաւ եւ հայերէն լեզուով Հոգեւոր աղօթքը կարգաց:

Եկեղեցւոյ մէջ սիրովոր եւ պատուարեք ընդունելութիւն մը եղաւ թաղ. խորհուրդ ներկայացուցիչներուն որոնք առաջնորդուեցան հրաւիրեցող յատուկ վարդ:

Թափարին կողմակերպութեան մէջն ալ առաջնակարգ տեղ մը տրուած էր հայերուն:

Գաղապի ծածկուցի մը ծաղկը փոխն ի փոխ բռնեցին Տեարք Արթին պէ Ռիկեմ, Մ. Գալֆաեան, Յ. Մաթաթօ, Ա. Ճէվահիրեան, Կ. Մեհրեան, Տրթ. Ժամկոչեան, Պերճ Օհանեան, Լ. Միտիլեան եւ Լ. Պերպիլեան:

Հայ գաղութին կողմէ նուիրուած պատկը զառաքին առջնէն կը տանէին Տեարք Միհրան թիւն եւ Ս. Ստիւն:

Հարկու կողմէ եղած այս հոգեւորական ցոյցը շատ լուս արտաբերութիւն մը թողոյ Կոստի ընտանեաց եւ ընդհանրապէս բոլոր յայտնի վրայ:

Թաղական խորհուրդը ցաւակցական նամակ մըն ալ ուղղեց Այրի Տիւրի Կոստի, յիշատակելով սիրաբեղ զայրենասէրին նիւթական եւ բարոյական աջակցութիւնը 95ին ջարդերուն առթիւ ի նպատակաւորութեան կատարած հանգանակութեանց:

ԱՅՐԻ ՏԻՒՆ ԵՒ ՓԻՄԷ Գ. ՊԵՏՐՈՍԵԱՆ Եւ իր զաւակները, Տիար Արթին Պետրոսեան եւ Նշանեան ընտանիքը իրենց խորին շնորհակալութիւնները կը ներկայացնեն ամեն անոնց որոնք ողբացեալ Գէորգ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ յուդարկաւորութեան ներկայ գտնուելով իրենց ցաւակցական զգացումներուն հաւաստիքը տուին այդ ախուր առթիւ:

Ա. Գ. Դ

Դաշնակի վիճակահանութիւնը տեղի ունեցաւ կիրակի օր հայոց Բարեգործական Ընկերութեան որոշութիւն մէջ, ի ներկայութեան բազմաթիւ հասարակութեան:

Դաշնակը վիճակած է 70 թիւ տոմար կին՝ որուն տիրոջմէն կը խնդրուի ներկայանալ, գաշնակը առնելու համար:

Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ Ը

Նոր ծովամարտի մը լուրը տակաւին չէ եկած: Ատոր տեղ Բիւթէրի մէկ հեռագիրը կ'իմացնէ թէ սպանիական նաւատորմիւր, իր զաւորներ գործադրուած ճարտար մէկ ուղմական շարժումով՝ արգիլած է ամերիկեան նաւատորմին յարձակումները, Բուպայի եւ Բոնթօ Ռիքոյի դէմ:

Յայտնի չէ սակայն թէ ինչ միջոց գործ դրած են սպանիացի կարենալ արգիլելու համար ամերիկեան յարձակումները: Արգեօք կարենոր ծովամարտ մը տեղի ունեցած է:

Արգէն քանի մը օրեր է ի վեր անհմատ եւ կցկտուր հեռագիրներ միայն կը հասնին: Բիւթէր, միշտ անպիտան շահերու կողմնակից, յօժարութեամբ անտեղեակ կը ձեռնայ, երբ անոնց շահերը վտանգի տակ տեսնայ: Իսկ Հալապի գործակալութիւնը միշտ անտեղեակ է արգէն:

Աւասիկ շաբաթ օրուրնէ ի վեր ստացուած հեռագիրներն ու սեղեկութիւնները:

Սպանիական նաւատորմիւր Բիւրասօ կը գտնուի, իսկ ամերիկեանը՝ Հալիթի հիւսիսակողմը:

—Սպանիական երկու յաճաւորակներ ամերիկեան հինգ նաւերու վրայ յարձակելով՝ անոնցմէ մէկը փնտած եւ միւս չորսը փախուստի ենթարկած են:

—Սպանիական նաւատորմը Բիւրասօ հասած է, զգուշանալու համար Սէմբուն ծովակալին նաւատորմէն՝ որ նորոգուելու համար հիմա Բոնթօ-Թիքօ կը գտնուի. փնտսները թեթեւ են:

—Ամերիկեան զրահաւորներ դրաւած են սպանիական «Բալաս» թնդանօթակիրը որ Մանիլայի նաւահանգիստը կը մանալ՝ առանց գիտնալու պատերազմի դրութիւնը:

—Կը հաւաստեն թէ Միացեալ Նահանգները որոշած են բազմաթիւ խումբեր ցամաք հանել, Ֆիլիպին կղզիներուն մէջ: Պաշտօնական ոչ մէկ վստահ լուր կայ Տէվէյ ծովակալին եւ Ֆիլիպիններու մէջ անցած դարձածին վրայ:

—Նիւյո ծովակալին նաւատորմը Չարլսթընէ (հարաւային Բարթօլին) անցած է՝ դէպի Բէյ-Ուէսթ ուղեւորելով:

—Սէրվերա ծովակալին նաւատորմիւր Բիւրասօյէ մեկնած է կիրակի օրը:

Կըսուի թէ երեք նոր յաճաւորակներ Բատիլէէ Մարթինիք հասած են:

—Խիստ գրաւորութիւն մը հաստատուած է Միացեալ Նահանգներու մէջ՝ զաւորների պահելու համար ամերիկեան նաւատորմին շարժումները: Որոշուած է 5000 ի տեղ 15000 հոգի զրկել Մանիլա:

—Սպանիոյ խորհրդարանը հրաժարած ըլլալով, Պ. Սակալմայի յանձնուած է զայն վերակազմելու հոգը:

—Հոնկ Գոնկէ կը հեռագրեն թէ անգլիական Բիլկլի մարտահաւը հիւսման ստացած է Բօլո երթալ, որ Ֆիլիպին կղզիներուն մօտ կը գտնուի, ի հարկին բրիտանական շահերը պաշտպանելու համար:

ՏՕՒ. Ռ. ՌԻՐՅԱԼԵԱՆ

ԱԿՆԱՐՈՅԺ

Պատիւ ունի ծանուցանելու թէ իր դարձնաւ տունը հաստատած է Գաշիկ, Պալարի փողոց, Բաւալ փառատուն մօտ, Մ. ԹԵՐԵԱՍ ՍԹԵԼԻՆ մէջ, որ պիտի բնակուի հիւանդները ամեն օր:

Տօր. Ռ. Ռիւթեան, նորագոյն գիտերու միջոցաւ, քիչ ժամանակի մէջ կը դարձնեն շիւ աչքերը, հիւանդ կրանիւլափոփոխութիւնը և բնականաբար ամեն տեսակ աչքի հիւանդութիւնները:

Ամեն երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը, ապրտաները ձրի պիտի դարձնեն, առաւօտեան ժամ 8 և 10:

4-8

ՅՈՎԱԿԻՄ ԶԱՏԷԵԱՆ

ԺԱՄԱԳՈՐԾ

ԽԱՆ-ԽԱԼԻԼ ՓՈՂՈՑ

ձեկանիւր խան, քիւ 16

Գ. Ա. Հ. Ի. Ե.

Արհեստին կատարելագործութիւններուն ծանօթ յիշեալ ժամագործը՝ պատրաստ է գոհացնել այն ամեն յաճախողները որոնք նորոգելու համար ժամացոյցներ պիտի յանձնեն իրեն:

Գերամատչելի գիններ:

3-10

Գ Ի Մ Ե Յ Է Ք

Գ. Է. ՍԵԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆՐ

ԳԱՀԻՐԷ ՄԱՍԻ ՎՈՂՈՑ ԳԱՀԻՐԷ

ԱՄԵՆ ՓԱՐՈՍ ԳԻՐԻՄԱՐՏՈՒՆ

Եթէ կուզէք ոսկի ժամացոյցներ՝ արանց կանանց 120 դր. և մինչեւ 2500 դր.

Եթէ կուզէք արծաթ ժամացոյցներ 50 դր. և մինչեւ 200 դր.

Եթէ կուզէք ներքէլ ժամացոյցներ 10 դր. և մինչեւ 100 դր.

Եթէ կուզէք պատիւ և բծաօր կապուած րանտի լոնք գաղղիական եւ ամերիկեան

Եթէ կուզէք նորանոց չղմտներ ոսկի, արծաթ եւ ոսկեպատ

Եթէ կուզէք այլ և այլ գոհարներ, աղանդեայ, ոսկի, արծաթ, ոսկեպատ

Գ Ի Մ Ե Յ Է Ք

Գ. Է. ՍԵԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆՐ

ՄՈՒՍԲԻ ՓՈՂՈՑ ԳԱՀԻՐԷ 11-20

ՏՊԱՐԱՆ

"ՓԱՐՈՍ" ԼՐԱԳՐԻ

ԿԵՏՊԱԳՐՈՒԻՆ

ԱՄԵՆ ԼԵՋՈՒԻ ԵՐԱՐԵՐԱԿԱՆ

ՄԱՀԱԳԻ, ՀՐԱԻՐԱԳԻՐ, ԱՅՅԱՔԱՐՏ

ՅԱՆԿԵՐ, ՏԵՂԵԿԱԳՐԵՐ

ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿ, ՆԱՄԱԿԱԳՐՈՒԻՆ

ՏՈՄՍԵՐ

Եղիպտոսի օր և է քաղաքէ կամ գիւղէ եկած յանձնարարութիւնները ամենայն խնամք և վախճալ կը կատարուին:

ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Այցնաւարտ եւ տնտես

Տպարանը բաց է ամեն օր բացի կիրակի եւ թուրքի, առաւօտեան ժամ 7 և երեկոյեան ժամ 7:

ՍԱՓՐԻՉ

ՕՇԱՆՆԷՍ ՊԵՅԼԵՐԵԱՆ

Բերայի ճարտար սափրիչներէն ՕՏԱՆՆԷՍ ՊԵՅԼԵՐԵԱՆ որ մէկ ու կէս տարիէ ի վեր Գաշիկէ հաստատուած է և մեծապէս գոհ թուլացած իր յաճախողները, այս անգամ իր նոր խանութին մէջ (Աթուղա էլ Խաթրա, թրամուէյի կայարանին դէմ) ամեն գիւրու թիւն ու հանգստաւէտութիւն կընծայէ մարբութիւն, արագութիւն ու վայելչութիւն՝ թէ ածիւնան և թէ վարայարգարութեան մասին:

Ա. Զ. Դ.

Ճարտարապետ Պողոս Խաթրան, վիսչեալ Պոլսոյ դեղարուեստական վարժարանէն, ճարտարապետական գրասենեակ մը բացած է Մաւրի փողոց, ժամագործ Բրամէր քիչ դէմ չէնքին երկրորդ յարկը: Կը ստանան շինութեանց ու նորոգութեանց վերաբերեալ ամեն տեսակ ճարտարապետական յանձնարարութիւններ: Նաեւ վախարդներուն զծագիտութեան և ճարտարապետութեան մասնաւոր գասեր կուտան:

Գրասենեակը բաց է ամեն օր առաւօտեան ժամը 8 և 12 և 2 և 7 (յ.մ.)

9-10

Le Gérant: Dr. A. S. HAGOPIAN

Տպարանիւն ՓԱՐՈՍ Լրագրի

ՃԱՇԱՐԱՆ "ԼՈՒՍԻՆ,"

Քրիտիկ Լիոնէի բովընտի փողոցը Արեւ ճաշարանի ճիշտ դէմը նոր բացուած այս հայկական ճաշարանին մէջ յաճախողները պիտի գտնեն ընտիր սնունդ, կերակուրներու պէտքաւթիւն, իւր նամեալ մարբութիւն, փաթկոտ սպասարկութիւն և գիւրամատչելի գիններ:

Ի ժամայ նոր ճիւղ մըն ալ պիտի աւելցուի գալեօրի և Քեպապի:

7-8

ՆՈՐ ՓՈԻՈ

ՀԱՅԿԱԿԱՆ

ՏԱՐՊԷԼ ԿԻՆԷՆԱ ՓՈՂՈՑ

Ա. Զ. Դ.

Ստորագրեալքս պատիւ ունինք ծանուցանելու արդոյ հասարակութեան թէ ամսոյս 1 և սկսեալ գնած ենք Տարա-Լէ-Կիլիկիայի Հայկական փառք և թէ մենք պիտի շարունակենք այսուհետեւ անոր գործառնութիւնները: Այդ փառքին գործելու եզա նակին մէջ խնամատ բարեկարգութիւններ ներմուծած ըլլալով՝ կարող պիտի ըլլանք եւրոպական սեէ փառքի մը պէս լիովին գոհացնել իրենց փառքով թեանք զմեզ պատու յաճախողները:

Կը սիրենք յուսալ որ պատուական աղգայինք զմեզ պիտի բաջարեն մեր այս ձեռնարկին մէջ:

Ա. Զուրիկեան եւ Նըարք Հացագործեան

15-15

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՆՈՅՑ ԵՐԹԵԻԿՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Յունուար 1898

ԳԱՀԻՐԷՆ ԱՂԵՔԱՆԳՐՈՅ ԳԻԾ

Կ Ա Յ Ե Ր Ա Ն Ք	Կառն 1,2,3,4	Օմնիպ. 1,2,3,4	Կէս ուղ. 1,2,3,4	Օմնիպ. 1,2,3,4	Էրթըն 1, 2 Կգ.	Օմնիպ. 1,2,3,4	Էրթըն 1, 2 Կգ.	Օմնիպ. 1 2 3 Կարգ	Էրթըն 1 2 3 Կարգ
Գաշիկ	մեկ.	4 45	—	7 30	8 15	9 30	3 30	4 45	7 15
Պէնհա	»	8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32
Թանթա	»	11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30
Տամանհուր	»	11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 41	—
Աղեքսանդրիա	»	3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—
Աղեքսանդրիա	»	6 25	9 15	10 45	2 30	1 —	9 40	8 7	—

ԱՂԵՔԱՆԳՐՈՅ ԳԱՀԻՐԷՆ ԳԻԾ

Կ Ա Յ Ե Ր Ա Ն Ք	Կառն 1,2,3,4	Օմնիպ. 1,2,3,4	Կէս ուղ. 1,2,3,4	Օմնիպ. 1,2,3,4	Էրթըն 1 2 Կգ.	Կառն 1,2,3,4	Օմնիպ. 1,2,3,4	Էրթըն 1 2 Կգ.	Օմնիպ. 1 2 3 Կարգ
Աղեքսանդրիա	մեկ.	—	7 —	7 15	9 —	9 20	2 30	4 15	6 15
Տամանհուր	»	—	8 6	8 58	10 2	12 14	4 13	5 15	8 6
Թանթա	»	—	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40
Պէնհա	»	6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—
Գաշիկ	»	7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—
Գաշիկ	»	8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷՉ

ՊԵՆՀԱՅԻ ԺԱՄԱՆԱԿ

ՍԻԻԷՉ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՌՈՅ	ԵՐԵԿՈՅ	ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՌՈՅ	ԵՐԵԿՈՅ
Դահլիճ	մեկ.	11 40	7 —	Սիւնչ (քարափ)	մեկ.	9 50	—
Պէնհա)	ժամ.	12 28	7 48	» կայարան	»	—	3 30
	մեկ.	12 33	7 53	Խամալիա	»	1 20	7 5
Զակարիկ)	ժամ.	1 34	8 54	Զակարիկ)	ժամ.	3 7	8 53
	մեկ.	1 44	9 4		մեկ.	3 17	9 3
Խամալիա	մեկ.	3 40	1 —	Պէնհա)	ժամ.	4 13	9 47
Սիւնչ կայարան	ժամ.	—	5 —	) Գաշիկ	մեկ.	4 17	9 4
					ժամ.	5 5	10 35
Տօր (քարափ)	ժամ.	6 55	—				